



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 83-Ա
12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Կապան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի առաջին նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի մասին հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 199-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող գույքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 181-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

6. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Դավիթ բեկ թաղամասի թիվ 10 շենքի թիվ 65 հասցեում գտնվող տարածքը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 195-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին

9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Աճանան գյուղի 1-ին փողոց թիվ 10 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին

10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Ռ. Մինասյան փողոցի թիվ 25/4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին

11. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Օխտար գյուղի Հովվի թաղամաս թիվ 7 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին

12. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Աղվանի բնակավայրի համակցված փաստաթղթերում փոփոխություն կատարելու, 0.085 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և աճուրդային կարգով օտարելու մասին

13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Աղվանի գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին

14. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Շահումյան փողոց թիվ 8 հասցեում և Կապան քաղաքի Լեն հանքեր թաղամասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը անհատույց սեփականության իրավունքով /սվիրատվություն/ Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին

15. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Դավիթ Բեկ թաղամասի թիվ 3/5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով Սասուն Մելիքի Հայրապետյանին օտարելու մասին

16. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի մարտի 05-ի N 18-Ա որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Աշոտավան թաղամասի թիվ 31/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով Արթուր Շնավոնի Հարությունյանին օտարելու մասին

17. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Հալիձոր թաղամասի թիվ 2/10 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

18. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Սևաքար գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

19. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և 2.22 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

20. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու, 4.03 հա և 0.21 հա հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին

21. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի համակցված փաստաթղթում փոփոխություններ կատարելու և 0.58 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

22. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և համայնքի վարչական սահմաններում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

23. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Վանեք բնակավայրի համակցված փաստաթղթում փոփոխություն կատարելու և հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

24. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը համաձայնություն տալու մասին

25. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 147-ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

26. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը «Կապան համայնքի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց սեփականության իրավունքով հանձնելու մասին

27. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 15-ի N 11-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ ք. Կապան, Մ. Պապյան փողոցի թիվ 18/40 հասցեում 139.2 քառ.մետր հասարակական նշանակության տարածքը անհատույց օգտագործման իրավունքով «ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐԲԻ ՏՈՒՆ» սոցիալ-մշակութային հասարակական կազմակերպությանը տրամադրելու մասին

28. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը որոշելու մասին

Կողմ(20)

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ


ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՅԱՆ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ










ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ԱԼԵԿՍԱՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱՐՏՅՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ
ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 12
ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 84-Ն
12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (20)

- ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ
- ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
- ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
- ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՅԱՆ
- ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
- ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- ԱՆԺԵԼԱ ԱԼԵԲՍԱՆՅԱՆ
- ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
- ՀԱՍՄԻԿ ՄԵՐՇԻՐՈՍՅԱՆ
- ԱՐՏՅՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- ԱԼԵԲՍԱՆԳԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ
ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

[Handwritten signatures]

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 12
ք. Կապան



[Handwritten signature]



Համալրված
Հայաստանի Հանրապետության Եղյայնի մարզի
Կապան համայնքի ավագանու
« 12 » սեպտեմբերի 2023թ
№ 84 Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ԼԱՄԱՅՆԵՐԻ
2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱՆՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Համայնքի եկամուտները շարադրող մաս

Կապան համայնքի 2024 թվականի բյուջեի կանխատեսումը կատարվում է եկամուտների և ծախսերի հավասարակշռության սկզբունքի հիման վրա:

Կանխատեսվող ծառայությունների քանակը և որակը հիմնականում կախված են կանխատեսվող եկամուտների ծավալից, առկա տնտեսական պայմաններից, մասնավորապես՝ գործող գներից, գնահից և սղաճից:

Համայնքի բյուջեի ցուցանիշների բարելավումը շարունակվում է, ինչը վկայում են աղյուսակում ներկայացված տվյալները:

Կապան համայնքի փաստացի ցուցանիշները 2019-2022 թվականներին

	հազար դրամ			
Ցուցանիշ	2019թ	2020թ	2021թ	2022
Եկամուտներ	2 346 946,5,6	3 001 834,4	4 182 402,9	4 968 081,2
Ծախսեր	2 461 077,7	2 694 222,3	3 671 376,0	4 495 952,9

Ցուցանիշների նման աճը պայմանավորված է բյուջեի եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացման կայուն միտումով, և դրա շնորհիվ ծախսերի ծավալների ավելացմամբ: Համայնքի բյուջեի սեփական եկամուտների /առանց պետբյուջեից ստացված պաշտոնական դրամաշնորհների և պետության կողմից համայնքներին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման համար ստացվելիք հատկացումների/ փաստացի հավաքագրված ծավալների 2019-2022 թվականների դինամիկան ներկայացված է հետևյալ աղյուսակում:

2019 փաստացի	2020 փաստացի	2021 փաստացի	2022 փաստացի
705 192,70	714 969,6	989 043,1	1 268 319,1

Տառանվող դինամիկան վկայում է սեփական եկամուտների աճի և կայունացման վերաբերյալ:

Եկամուտների կանխատեսման գործընթացը իրականացվել է բյուջետային գործընթացը կարգավորող օրենսդրության համապատասխան: Բյուջեի մուտքերի կանխատեսումները կատարելիս հաշվի են առնվել մուտքերի առումով բյուջեի եկամտային մասի ապառքները, առկա ապրանքների բռնագանձման հայցապահանջները: Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի 2024 թվականի եկամուտների ընդհանուր գումարը կանխատեսվել է 8 156 762,4 հազար դրամ, որը 155,3 %-ով գերազանցում է 2023 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշը և շուրջ 64,2%-ով կան 3 188 681,2 հազար դրամով ավել է 2022 թվականի փաստացի հավաքագրված եկամուտներից: Կանխատեսված նախագծի եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 1 311 708.9 հազար դրամ, որը 7,4%-ով գերազանցում

է 2023 թվականի ճշտված 1 305 860.2 հազար դրամը, իսկ 2022 թվականի փաստացի հավաքագրված եկամուտներից ավել է 3.4 %-ով կամ 43389.8 հազար դրամով:

Նախագծով կանխատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունն առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում.

Հարկեր և տուրքեր՝ 2024-2026 թվականի հարկային եկամուտները և տուրքերը ծրագրելիս օգտագործվել են մակրոտնտեսական այն ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին հարկատեսակների հարկման բազայի ձևավորման վրա: Ցուցանիշների կանխատեսման համար հիմք են ընդունվել նախնական վերլուծությունները, կիրառման առաջարկված մոտեցումները և հաշվարկները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքը, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները: Պետական տուրքերի գծով բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են՝ ըստ նախորդ տարիների փաստացի հավաքագրումների միտումների, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները:

Հարկային եկամուտները և տուրքերը 2024 թվականի համար նախագծով կանխատեսվել են 355 785.5 հազար դրամ՝ ընթացիկ տարվա ի սկզբանե հաստատված 329 036.0 հազար դրամի դիմաց, ինչը ավել է 2022 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից 4400.4 հազար դրամով և շուրջ 1.2 %-ով:

Պաշտոնական դրամաշնորհներ – դոտացիա, սուրվենցիա

Ֆինանսական համահարթեցում՝ Համայնքի ներդաշնակ զարգացմանը նպաստելու, նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու հնարավորություն ստեղծելու և օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման համար ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունները նվազեցումն է:

Դոտացիան՝ որպես ոչ նպատակային, պետության կողմից անհատույց տրվող դրամական միջոց , համայնքը կողդի է համայնքի բյուջեի վարչական մասի ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, այն օգտագործելով ազատ և ինքնուրույն՝ համահարթեցնելով (մեղմելով) համայնքում ֆինանսական հնարավորությունների միջև առկա անհամաչափությունները:

Համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի 2024 թվականի համար պետության կողմից հատկացվող դոտացիա է կանխատեսվել 2 585 287,0 հազ. դրամ

Սուրվենցիա՝ համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար պետական բյուջեից անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոց է, որն ուղղվում է համայնքում գործող երաժշտական և արվեստի դպրոցներում (ազգային նվագարաններ) սովորող երեխաների ծախսերի փոխհատուցմանը՝ ընթացիկ ծախսերին, և համայնքի կապիտալ բնույթի խնդիրների լուծմանը.

Ընթացիկ ծախսերի հատկացումը կատարվում է երաժշտական և արվեստի դպրոցների կողմից ներկայացված երեխաների հաճախումների հիմնավոր հաշվարկների, համայնքապետարանի և լիազոր մարմնի միջև կնքված համապատասխան պայմանագրերի հիման վրա: Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային, փողային նվագարանների գծով սովորում են 175

երեխա, սակայն «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով փոխհատուցում է հատկացվում ընդամենը 41 սովորողի համար (պայմանագիր ՍՄՍՀ-01 10.01.2023թ.): Համայնքի 2024թվականի համար միջնաժամկետ ծախսերի ծրագրով կանխատեսվել է 2023 թվականի մակարդակը:

Համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով հիմք ընդունելով համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքին տրամադրվող սուբվենցիա է կանխատեսվել ընդամենը 3 564 836,3 հազար դրամ, որից տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղվող սուբվենցիա 3 221 836,3 հազար դրամ, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի համաձայն համայնքի բնապահպանական ծրագրերի իրականացման համար տրամադրվող սուբվենցիա 161 918.9 հազար դրամ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված ռոյալթիներից մասհանում ազդակիր բնակավայրերին ու ազդակիր բնակավայրեր ներառող համայնքներին՝ 183 700.0 հազար դրամ:

Պետության պատվիրակած լիազորությունների իրականացման համար հատկացումներ 2024 թվականին պետության պատվիրակված լիազորությունների իրականացման համար Համայնքն կստանա պետական բյուջեից ֆինանսավորում՝ համապատասխան առաձևացված ստորաբաժանման (քաղաքացիական կացության կատերի գրանցում) միջոցով իրականացնելով քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործունեություն: 2024 թվականի համար պատվիրակված լիազորությունների իրականացման համար կանխատեսվում է պետական բյուջեից հատկացում 5.997 միլիոն դրամ:

Պաշտոնական դրամաշնորհները (տրանսֆերտները) համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ կազմում է 5227.7 միլիոն դրամ կամ 65.5%:

Այլ եկամուտներ

Այլ եկամուտների գծով բյուջետային մուտքերի կանխատեսումը 2023 թվականի համար կանխատեսվել է 1 641 920.4 հազար դրամ:

Այլ եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով 2024 թվականի մուտքերը կանխատեսվել են՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, նախորդ տարիների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածի փաստացի մուտքերը, կնքված պայմանագրերը և ապառքները:

Վարձակալական վճարները /հողի և անշարժ գույքի/ հաշվեգրվել են ըստ վարձակալական պայմանագրերի, հողերի դեպքում՝ ըստ կատեգորիաների և ըստ նպատակային նշանակության, անշարժ գույքի դեպքում՝ ըստ կադաստրային արժեքների:

Ծնողական վճարները /նախադպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն/ պլանավորվել են՝ հիմք ընդունելով մեկ երեխայի օրական կամ ամսական ծախսային նորման, նախադպրոցական կրթական հաստատություններում՝ նաև սննդի նորման:

Աղբահանության, վճարները սահմանվել են համապատասխան գործող օրենքների և ծառայությունների մատուցման կարգի՝ ըստ շնչերի, սպասարկման տարածքների մակերեսների:

Համայնքի ծախսային քաղաքականությունը շարադրող մաս

1. Արդյունքները, որոնց համայնքը ցանկանում է հասնել համայնքի կողմից իրականացվելիք ծրագրերի շրջանակներում ծախսեր կատարելու միջոցով՝ ներկայացված հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտադիր խնդիրները, հետևյալն են՝

1) Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.

Նախադպրոցական տարիքի բոլոր երեխաների ընդգրկվածության ապահովում նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ ավելացնելով խմբասենյակների թիվը, նորոգելով մանկապարտեզները և կառուցելով նոր մանկապարտեզներ, գյուղերում ներդնելով այլընտրանքային նախադպրոցական կրթության անվճար ծառայություններ և ստեղծելով հնարավորություններ՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

Նախադպրոցական կրթության որակի բարելավում՝ վերապատրաստումներ, մասնագիտական փորձի փոխանակումներ կազմակերպելու միջոցով, սահմանելով դաստիարակի որակավորման տարակարգերի չափորոշիչներ, հնարավորություն ընձեռնելով երկարամյա փորձ ունեցող դաստիարակի օգնականներին մասնագիտական կրթություն ստանալու և աշխատանքային առջընթացի համար:

Արտադպրոցական կրթության որակի բարելավում հաստատություններում՝ պարապմունքների կազմակերպման ժամանակակից մեթոդների կիրառման, վերապատրաստումների, փորձի փոխանակման ծրագրերի, որակավորման տարակարգերի չափորոշիչներ սահմանելու և բարձր առաջադիմություն ունեցող լավագույն սաներին՝ բարձրագույն մասնագիտական նպատակային կրթություն ստանալու և աշխատանք ապահովելու միջոցով:

Ակումբ-գրադարանների տեխնիկական վերազինման և կենսաթոշակի անցած մասնագետների միջոցով արտադպրոցական կրթության հասանելիության ապահովում այն թաղամասերի ու գյուղերի երեխաների համար, որտեղ չկան արտադպրոցական հաստատություններ:

2) Համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը.

Սպորտի և առողջ ապրելակերպի խթանում՝ աթլետիկայի մարզադպրոցի համար նոր շենքի առկայություն, արդիականացված և վերազինված մարմնամարզության մարզադպրոց, մարզադպրոցի մանկավարժական անձնակազմի համար սահմանված որակավորման տարակարգերի չափորոշիչներ, ձեռքբերված ժամանակակից վազբուդի, բասկետբոլի պրոֆեսիոնալ ակումբի առկայություն, տարբեր մարզաձևերից կազմակերպված մրցաշարեր, քաղաքի բոլոր թաղամասերում և մի շարք գյուղերում կառուցված բազմաֆունկցիոնալ խաղահրապարակներ, խաղադաշտեր, տեղադրված մարզասարքեր և այլն:

3) Համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը.

Մշակութային ավանդույթների ընդգրկվածության պահպանում, զարգացում և ապահովում՝ մշակույթի կենտրոնի նյութատեխնիկական բազայի արդիականացման, վերազինման և կահավորման, նոր երաժշտական խմբերի ստեղծման, նոր փառատոնների և միջոցառումների կազմակերպման, գյուղերում մշակութային օջախների բարեկարգման և վերազինման, կապանյան մշակույթը ներկայանալի դարձնելու միջոցով:

Թանգարանների և գրադարանների հետ կապի աշխուժացում և ավելի ամրապնդում՝ համալրելով գործող թանգարանների թանգարանային ֆոնդը, հիմնելով նոր թանգարան, ստեղծելով գրադարանային գրավիչ միջավայր և համալրելով գրադարանների գրքային ֆոնդը, ստեղծելով գրադարանների աշխատակիցների խրախուսման համակարգ՝ նրանց մասնագիտական պատրաստվածության և որակավորման հիման վրա:

4) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը.

Համայնքում երիտասարդության ակտիվության բարձրացում և պահպանում՝ ապահովելով երիտասարդության ռազմավարական ծրագրերի հետևողական իրականացումը, համայնքի կառավարման և որոշումների կայացման հարցում երիտասարդների ակտիվ մասնակցության խթանումը, երիտասարդական փառատոնների կազմակերպումը և հավաքների կազմակերպման աջակցությունը՝ հանրապետության տարբեր մարզերի երիտասարդների մասնակցությամբ, երիտասարդական ակումբների /հայրենասիրական, մարզական, ինտելեկտուալ/ հիմնումը /հիմնման աջակցությունը/, մարզական և մշակութային միջոցառումներին երիտասարդ ընտանիքների մասնակցության խթանումը:

5) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը, համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը (տեղական սոցիալական ծրագիր).

Բնակիչների ավելի բարեկեցիկ կյանքի ապահովում՝ խոցելի ընտանիքների հասցեական և թիրախավորված աջակցության, համայնքային սոցիալական աշխատանքի խթանման միջոցով առավել խոցելի ընտանիքների կարիքներին արձագանքման, խոցելի ընտանիքների տնտեսական դիմակայունության բարձրացման հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի հնարավորության և սոցիալ հոգեբանական ծառայությունների ընդլայնման, սոցիալական ոլորտի գործընկերների հետ համատեղ սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման, համայնքային մակարդակում երեխաների պաշտպանության ցանցի հիմնման և կանոնավոր գործունեության ապահովման, Կապանի Մանկական Կենտրոնի ծառայությունների ընդլայնման և մասնագետների կարողությունների զարգացման, Արցախից տեղահանված ընտանիքների լիարժեք ինտեգրման, տնտեսական կայունության և սոցիալ հոգեբանական աջակցության տրամադրման միջոցով:

6) Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանումը.

Գյուղատնտեսության զարգացման ապահովում՝ ոռոգման և խմելու ջրերի հին համակարգերի հիմնանորոգման, նոր համակարգերի ստեղծման, ավանդական գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման աջակցության և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ գյուղատնտեսության զարգացման աջակցությամբ՝ փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման, տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների ձեռքբերման, ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների ստեղծման և փոքր, միջին ու մեծ ջերմոցների ստեղծման միջոցով:

7) Համայնքում զբոսաշրջության զարգացման խթանումը.

Զբոսաշրջության զարգացման՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման աջակցության, գյուղերը զբոսաշրջային տեսանկյունից ավելի գրավիչ դարձնելու, պատմամշակութային հուշարձանների պահպանության աջակցության նպատակով շահագրգիռ կողմերի հետ համագործակցության, զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և անհատների հետ համագործակցության, օդանավակայանի գործարկման համար շահագրգիռ կողմերի հետ համագործակցության միջոցով:

8) Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը, համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործում, համայնքային գույքի կառավարումը.

Համայնքի բարեկարգ տեսքի ապահովում՝ հիմնանորոգելով Վազգեն Սարգսյանի անվան մանկական զբոսայգին և տեղադրելով նոր կարուսելներ, Գարեգին Նժդեհի հուշահամալիրի հարևանությամբ կազմակերպելով հանգստի գոտի, բարեկարգելով հարակից տարածքը և հիմնելով սահաղաշտ, հիմնանորոգելով նախադպրոցական ուսումնական հաստատությունները և հիմնելով նոր նախադպրոցական ուսումնական հաստատություններ, կառուցելով նոր շենք աթլետիկայի մարզադպրոցի համար, ապահովելով մշակույթի կենտրոնի ամբողջական նորոգումը, կառուցելով ավտոպարկ և գրասենյակ կոմունալ ծառայության համար, հիմնանորոգելով ակումբներն ու գրադարանները, բարեկարգելով բակերն ու ճանապարհները, նորոգելով և հիմնելով խաղաղաշտեր, խաղահրապարակներ, մարզահրապարակներ և հանգստի գոտիներ, նորոգելով բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներն ու վերելակները, մաքրելով Վաչագան գետի հունը, վերականգնելով հայելային պատկերներն ու հենապատերը, տեղադրելով նոր ճաղավանդակներ, Դավիթ Բեկ հրապարակին կից կառուցելով ավտոկայան և բարեկարգելով հարակից այգին, նորոգելով թունելից մինչև Բաղաբերդ թաղամաս՝ Մ2 միջպետական ճանապարհի լուսավորության համակարգը, Կապան քաղաքում կառուցելով ապաստարաններ, ապահովելով մի շարք գյուղական բնակավայրերի խմելու ջրի մատակարարումն ու բարձրացնելով ջրամատակարարման որակը, վերանորոգելով խմելու ջրագծերը, հիմնելով և նորոգելով մի շարք գյուղերի ոռոգման ցանցը, բարեկարգելով մի շարք գյուղերի գյուղամիջյան ճանապարհները և ասֆալտապատելով դրանց մի մասը, նորոգելով գյուղերի հասարակական և վարչական շենքերը, կառուցելով նոր վարչական շենքեր, ցանկապատելով համայնքային գերեզմանատները և այլն:

Հասարակական տրանսպորտի հասանելիության ապահովում բոլոր ուղղություններով:

Քաղաքային միջավայրի էկոլոգիական պայմանների և քաղաքի արտաքին տեսքի բարելավում՝ ծաղկապատ տարածքների, կանաչ գոտիների ընդլայնմանն ուղղված աշխատանքներ իրականացնելու, Ողջի և Վաչագան գետերի հունների սանիտարական մաքրման միջոցով:

Բնակիչների անվտանգ տեղաշարժը ապահովելու և հիվանդությունների տարածումը կանխարգելելու նպատակով թափառող կենդանիների վնասազերծում:

Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը համայնքի բոլոր գյուղերում ապահովում, կոմունալ ծառայության ավտոպարկը բազմաֆունկցիոնալ մեքենաներով համալրում, աղբահանության վարձավճարների էլեկտրոնային գանձման համակարգի ներդրում:

9) Պետության պաշտպանության իարականացման աջակցումը, աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

Քաղաքացիական պաշտպանության արդյունավետության բարձրացում և բնակչության լիարժեք պատասխարման ապահովում՝ հնարավորինս անվտանգ դարձնելով Կապան համայնքի գյուղերն իրար կապող ճանապարհները,

արդիականացնելով քաղաքացիական պաշտպանության ինժեներական, վթարավերականգնողական ծառայությունները և վերազինելով անհրաժեշտ տեխնիկայով և սարքավորումներով, կառուցելով նոր ապաստարաններ, նորոգելով բազմաբնակարան շենքերի նկուղները, արդիականացնելով և վերազինելով քաղաքացիական պաշտպանության ծառայությունները:

Համայնքի բնակչության անվտանգության ապահովում և անհրաժեշտության դեպքում սահմանային միջադեպերին արձագանքում՝ արագ արձագանքման խմբեր ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Ջինված ուժերին՝ համայնքի սահմանամերձ բնակավայրերում պաշտպանությանն ուղղված ենթակառուցվածքների ստեղծման աշխատանքներում աջակցելու, սահմանների կահավորման ու ճանապարհների կառուցման գործում Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերի հետ համագործակցելու, Կապան համայնքի ելքերում և մուտքերում տեսահսկման համակարգեր տեղադրելու միջոցով:

Աղետների ռիսկերի արդյունավետ կառավարման ապահովում՝ հանքարդյունաբերական ձեռնարկությունների հետ համագործակցությամբ ուսումնասիրելով կոնսերվացված և գործող պոչամբարների ու ապարային թափոնակույտների և Գեղիի ջրամբարի տեխնիկական վիճակը, շարունակելով գետերի և սելավատարների մաքրման աշխատանքները, ամրացնելով և վերականգնելով Վաչագան ու Ողջի գետերի վնասված հենապատերը, ուսումնասիրելով Կապան համայնքի սողանքային գոտիները, ստեղծելով տեղեկատվական բազա և իրականացնելով կանխարգելիչ միջոցառումներ, բնական աղետների դեպքում աջակցելով Սյունիքի մարզի փրկարարական վարչությանը որոնողափրկարարական աշխատանքներ իրականացնելու գործում:

10) Գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.

Գործարար միջավայր բարելավում և ձեռնարկատիրության խթանում՝ գործարարների համար վստահելի ներդրումային միջավայր ստեղծելու միջոցով:

11) Համայնքում բնակարանային շինարարության խթանումը.

Բնակարանային շինարարության խթանում՝ համայնքում համագործակցելով կառուցապատողների հետ:

12) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը, ներառյալ համայնքում էկոլոգիական կրթության և դաստիարակության խթանումը.

Շրջակա միջավայրի պահպանության ապահովում՝ անտառների և կանաչապատ տարածքների պահպանության, նոր կանաչապատ տարածքների ստեղծման միջոցով:

13) Բարեգործության խթանումը համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով.

Բարեգործության խթանում՝ համագործակցելով բարերարների հետ, ստեղծելով գործընկերային հարաբերություններ, ինչպես նաև կապ հաստատելով և ներգրավելով արտերկրում բնակվող կապանցիներին:

2. Ծախսային գործոնները, որոնք կանխատեսվող ժամանակահատվածում կազդեն համայնքում իրականացվելիք ծախսերի վրա հետևյալն են՝

1) Աշխատավարձի բարձրացում, ինչպես նվազագույն աշխատավարձի, այնպես էլ սահմանված կարգով տարբեր ոլորտների մասնագետների, օրինակ նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի և այլն,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 24-րդ կետով սահմանված պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրի ընդհանուր արժեքի չափաբաժնի փոփոխությունները,

3) Պատերազմի վտանգը և դրա հետևանքները, հատկապես հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Կապան խոշորացված համայնքի 39 բնակավայրերի մեծ մասը սահմանամերձ են, իսկ 19 բնակավայրերը՝ խիստ սահմանակից են Ադրջեբանի Հանրապետությանը,

4) Covid-19 համավարակի /և այլ հնարավոր համավարակի/ սրացումը /նոր ի հայտ գալը/ և դրանով պայմանավորված սահմանափակումների, այդ թվում՝ տնտեսական, կիրառումը և խստացումը, համավարակով ու սահմանափակումների կիրառման/խստացումներով պայմանավորված սոցիալական վիճակի վատթարացում և այն մեղմելու նպատակով նոր ծախսերի առաջացում,

5) Արտակարգ իրավիճակով կամ որևէ բնական երևույթով պայմանավորված նոր՝ չնախատեսված ծախսերի անհրաժեշտություն կամ պլանավորված եկամտի նվազում,

6) Տարբեր գործընթացներով պայմանավորված արդեն իսկ նախատեսված ծրագրերի շահառուների թվի կտրուկ ավելացում,

7) Բոլոր այն ներքին և արտաքին ծախսային գործոնները, որոնք կարող են ազդել պետական բյուջեից ստացվող դոտացիաների, սուբվենցիաների և հատկացումների վրա,

8) ՀՀ դրամի արժևորումը կամ արժեզրկումը, տարածաշրջանում արտահանվող օգտակար հանածոների գների հնարավոր անկումը կամ նավթի և շինանյութերի գների կտրուկ աճը, գնաճը, աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված պարենային և ոչ պարենային ապրանքների արտահանման կամ ներկրման սահմանափակումները, որոնք կարող են որևէ ազեղցություն ունենալ համայնքի սոցիալական և տնտեսական իրավիճակի վրա՝ դրանով պայմանավորված նաև կանխատեսվող ծախսերի վրա:

Հնարավոր է լինեն նաև այլ ներքին և արտաքին գործոններ, որոնք ներկա պահին հնարավոր չէ կանխատեսել կամ որպես ոիսկ դիտարկել, որոնք, սակայն, կարող են էական բացասական ազդեցություն թողնել համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա՝ դրանով իսկ խոչընդոտելով կանխատեսվող ծախսերի կատարումը կամ նախատեսված ծրագրերի իրականացումը:

3. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, հետևաբար նաև միջնաժամկետ ծախսային ծրագրի համար, որպես առաջնահերթություն և գերակայություն է սահմանվում ավելի անվտանգ, բարեկարգ, կանաչապատ, էկոլոգիապես մաքուր, նորոգված ենթակառուցվածքներով, տնտեսապես զարգացած, հոգևոր, մշակութային, մարզական ակտիվ կյանքով ապրող և ավելի բարեկեցիկ բնակիչներով համայնք ունենալը: Առաջնահերթությունների թվում են՝ ավելի համակարգված աղբահանություն, նախադպրոցական և արտադպրոցական կրթության ոլորտում ընդգրկված առավել շատ երեխաներ, համայնքային կյանքում երիտասարդների ակտիվ մասնակցությունն և այլն:

Համայնքի զարգացման հիմնական գրավականը պետք է լինի տնտեսության դիվերսիֆիկացիան /բազմատեսակացում/, այսինքն՝ հանքարդյունաբերությունից զատ և նրանով չպայմանավորված ոլորտների զարգացումը, որոնցից առաջնահերթը մեր համայնքում կլինեն բարձր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ և ինտելեկտուալ ներուժի օգտագործմամբ նոր աշխատատեղերի հիմնումը, գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացումը և այլն:

4. Համայնքում արտաքին ֆինանսական աջակցության չափերը և աղբյուրները կանխատեսելն այնքան էլ իրատեսական չէ, քանի որ ներկա պահին առկա չեն հստակ պայմանավորվածություններ կամ արդեն իսկ կնքված պայմանագրեր ու համաձայնագրեր:

2021-2023 թվականների հատկապես սուրվենցիոն ծրագրերի և համայնքում այլ բարեկարգման աշխատանքների իրականացման համար համայնքին աջակցություն են ցուցաբերել տարածաշրջանում գործող հանքաարդյունաբերական ընկերությունները:

Համայնքն ակտիվ համագործակցում է նաև տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների հետ, դիմելով նաև այդ կազմակերպությունների կողմից հայտարարված դրամաշնորհներին: Միջազգային դրամաշնորհների և այլ ֆինանսական աջակցությունների միջոցով համայնքը միտված է զարգացնել հատկապես զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը, կրթությունը, իրականացնել սոցիալական բնույթի և արևային էներգիայի կիրառմանն ուղղված ծրագրեր: 2021 թվականից մեկնարկել է Կապանում ԹՈՒՄՈ կենտրոնի ստեղծման ծրագիրը, որն իրականացվում է Երվրախորհրդի և ԹՈՒՄՈ կենտրոնի համաֆինանսավորմամբ, ընդհանուր բյուջեն 2 միլիոն եվրո է, կենտրոնը կգործի արդեն 2023 թվականից:

Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող՝ «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրի շրջանակներում համայնքը հաղթող է ճանաչվել «Համայնքային վերափոխումների պորտֆելի» մրցույթում: Բուն ծրագրային գործողությունները սկսվել են 2023 թվականի հունվարից, նախատեսվում է մշակել այնպիսի ռազմավարություն, որի իրականացման արդյունքում հնարավոր կլինի հասնել տնտեսության դիվերսիֆիկացիայի և հաղթահարել ներկայիս անկայուն և անորոշ իրավիճակի հետևանքները:

Աշխատակազմի քարտուղար՝

Նելլի Եսինսագարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

Հ/Հ	Պարտադիր խնդիր	2 024	Ֆինանսավորման աղբյուրներ	
			Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
3. Համայնքի գույքի կառավարում		408 989 260	40 510 240	368 479 020
1	Կապանի համայնքապետարանի հիմնանորոգում և նոր մասնաշենքի կառուցում	307 713 660		307 713 660
2	Տավրուս գյուղի վարչական շենքի և ակումբի նորոգում	49 446 700	19 778 680	29 668 020
3	Օխտար գյուղի ակումբի շենքի հիմնանորոգում	51 828 900	20 731 560	31 097 340
4. Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակություն		3 000 000	3 000 000	0
4	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար գույքի ձեռքբերում	3 000 000	3 000 000	
5. Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում		217 707 000	87 082 800	130 624 200
5	Ռ. Մինսայան փողոցի 12 շենքի գրադարանի նորոգում	20 397 000	8 158 800	12 238 200
6	Մ. Հարությունյան փողոցի 6 շենքի գրադարանի նորոգում	15 200 000	6 080 000	9 120 000
7	Տանձավեր բնակավայրի ակումբի շենքի նորոգում	30 155 000	12 062 000	18 093 000
8	Առաջաձոր բնակավայրի ակումբի շենքի նորոգում	20 165 000	8 066 000	12 099 000
9	Ձորաստան բնակավայրի ակումբի շենքի նորոգում	30 400 000	12 160 000	18 240 000
10	Սևաքար բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգում	30 400 000	12 160 000	18 240 000
11	Դավիթ Բեկ բնակավայրում Արամ Մանուկյանի տուն-թանգարանի հիմնում	70 990 000	28 396 000	42 594 000
7. Համայնքում մարզական կյանքի կազմակերպում, ֆիզիկական կոլտուրայի և առողջ ապրելակերպի խթանում		510 000 000	232 250 000	277 750 000
12	Արամ Մանուկյան փողոցի 1-ին սրբանցքի թիվ 1, 2, 3, 4, 5 շենքերի միջանկյալ հատվածներում խաղահրապարակի, հանգստի գոտու, մանկական խաղահրապարակի կառուցում նորոգում	100 000 000	45 000 000	55 000 000
13	Բաղաբերդ թաղամասի թիվ 16, 17 և 21 թ/ք շենքերի հարևանությամբ խաղադաշտի նորոգում	30 000 000	13 500 000	16 500 000
14	Բաղաբերդ թաղամասի թիվ 10 շենքի հարևանությամբ խաղադաշտի նորոգում	20 000 000	9 000 000	11 000 000
15	Ձորք թաղամասի թիվ 4 և 5 շենքերի հարևանությամբ խաղադաշտի նորոգում, մանկական խաղահրապարակի կառուցում	30 000 000	13 500 000	16 500 000
16	Դավիթ Բեկ թաղամասի թիվ 3 շենքի հարևանությամբ խաղադաշտի նորոգում	20 000 000	9 000 000	11 000 000
17	Մ. Հարությունյան փողոցի թիվ 1 թ/ք շենքի և Ողջի գետի միջանկյալ հատվածում հանգստի գոտու, մանկական խաղահրապարակի և խաղադաշտի կառուցում	40 000 000	18 000 000	22 000 000
18	Շահումյան փողոցի թիվ 15, 17, 19 թ/ք շենքերի միջանկյալ հատվածում մանկական խաղահրապարակի, հանգստի գոտու և խաղադաշտի կառուցում	40 000 000	18 000 000	22 000 000
19	Երկաթուղայինների փողոցի թիվ 7 և 9 թ/ք շենքերի հարևանությամբ խաղադաշտի նորոգում, թիվ 13 թ/ք շենքի հարևանությամբ մանկական խաղահրապարակի կառուցում	20 000 000	9 000 000	11 000 000
20	Կապանի համայնքապետարանի հարակից այգու նորոգում	50 000 000	22 500 000	27 500 000

22	Թումանյան փողոցում արվեստի դպրոցի հարևանությամբ ֆուտբոլի դաշտի կառուցում	40 000 000	18 000 000	22 000 000
23	Հ Ավետիսյան փողոցի թիվ 16 և Մ. Պապյան փողոցի թիվ 15 p/p շենքերի միջանկյալ հատվածում հանգստի գոտու կառուցում	20 000 000	9 000 000	11 000 000
24	Թումանյան փողոցի թիվ 16, 18 և Ա. Մանուկյան թիվ 3, 5 p/p շենքերի միջանկյալ հատվածում մանկական խաղահրապարակի կառուցում	20 000 000	9 000 000	11 000 000
25	Հ Ավետիսյան թիվ 12 p/p շենքի հարևանությամբ հանգստի գոտու և մանկական խաղահրապարակի կառուցում	30 000 000	13 500 000	16 500 000
26	Ամանան գյուղում մանկական խաղահրապարակի կառուցում	15 000 000	6 750 000	8 250 000
27	Ագարակ գյուղում մանկական խաղահրապարակի տեղադրում	5 000 000	5 000 000	
9. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում, համայնքի աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովում, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովում		1 071 818 313	266 446 537	805 371 776
28	Ներքին Հանդ բնակավայրի խմելու ջրի մատակարարման ապահովում	214 194 920	64 258 476	149 936 444
29	Սգնակ բնակավայրում խմելու ջրի մատակարարման ապահովում	223 018 120	66 905 436	156 112 684
30	Դիցմայրի բնակավայրում խմելու ջրի մատակարարման ապահովում	151 180 860	45 354 258	105 826 602
31	Աղվանի գյուղի խմելու ջրագծի կառուցում	75 711 769	22 713 531	52 998 238
32	Արծվանիկ գյուղի խմելու ջրամատակարարման համակարգի կառուցում	57 504 405	17 251 322	40 253 084
33	Արծվանիկ գյուղի խմելու այլընտրանքային ջրագծի կառուցում	183 663 190		183 663 190
34	Վերին Խոտանան գյուղի խմելու ջրի ջրագծի նորոգում	166 545 049	49 963 515	116 581 534
10. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում		2 708 201 450	1 218 690 653	1 489 510 798
35	Մ. Ստեփանյան փողոցի մի հատվածի ասֆալտապատում /ԲԿԱԳ-ի շենքից մինչև «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դիմացի կամուրջ/	156 689 710	70 510 370	86 179 341
36	Ձորք թաղամասի բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքներ	144 307 010	64 938 155	79 368 856
37	Դավիթ Բեկ հրապարակից Դավիթ Բեկ թաղամաս տանող ճանապարհի թիվ 2, թիվ 4, թիվ 5, թիվ 7, թիվ 8, թիվ 10, թիվ 12 p/p շենքերի բակերի և թաղամասերից Սպանդարյան փողոց տանող ճանապարհի նորոգում	207 858 530	93 536 339	114 322 192
38	Գեղանուշ բնակավայրի կենտրոնական հատվածը, կենտրոնից դեպի դպրոց և փողոց	22 352 640	10 058 688	12 293 952
39	Գեղանուշ գյուղ տանող ճանապարհից դեպի Գոմարան բնակավայրի ակունք	29 758 670	13 391 402	16 367 269
40	Կաղնուտ բնակավայրի գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում	55 710 220	25 069 599	30 640 621
41	Համլետական թաղամաս տանող ճանապարհի ասֆալտապատում	163 042 990	73 369 346	89 673 645
42	Շղարշիկ թաղամաս տանող ճանապարհի ասֆալտապատում	156 320 300	70 344 135	85 976 165
43	Ազատամարտիկների փողոցի մի հատվածի /Մ. Ստեփանյան փողոցի թիվ 2 p/p շենքից մինչև Ազատամարտիկների փողոցի թիվ 5 p/p շենքի վերջնամասը/, Ազատամարտիկների փողոցի թիվ 5 և թիվ 7 p/p շենքերի բակերի և Մ. Ստեփանյան փողոցի թիվ 2, թիվ 4 և թիվ 6 p/p շենքերի բակերի նորոգում և ասֆալտապատում	90 000 000	40 500 000	49 500 000
44	Երկաթուղայինների փողոցի թիվ 1, թիվ 3, թիվ 5 և թիվ 6 p/p շենքերի բակերի նորոգում և ասֆալտապատում	87 443 270	39 349 472	48 093 798

46	Շինարարների փողոցի թիվ 2, 3, 4, 5, 7, 8, 9, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 20, 22 և թիվ 24 ք/ք շենքերի բակերի նորոգում և ասֆալտապատում	425 000 000	191 250 000	233 750 000
47	Հ. Ավետիսյան փողոցի 1, 1ա, 2ա, 24, 26, 8, 10, 12, 16, 18, 20, 22 և Մ. Պապյան փողոցի 1, 2, 4, 6, 10, 13, 16, 20, 20ա ք/ք շենքերի բակային հատվածների նորոգում և ասֆալտապատում	200 000 000	90 000 000	110 000 000
48	Արամ Մանուկյան փողոցի 1-ին նորանցքի ճանապարհի և ձայնակողմյան մայթի նորոգում և ասֆալտապատում	150 000 000	67 500 000	82 500 000
49	Թումանյան փողոցի ասֆալտապատման աշխատանքներ	40 000 000	18 000 000	22 000 000
50	Կապան քաղաքի Արամ Մանուկյան, Թումանյան և Հ. Ավետիսյան փողոցների հատման կամրջի երթևեկելի մասի, մայթերի և բազրիքների նորոգում	30 000 000	13 500 000	16 500 000
51	Կապան քաղաքի Սպանդարյան, Մ. Հարությունյան և Շահումյան փողոցների հատման կամրջի երթևեկելի մասի, մայթերի և բազրիքների նորոգում	30 000 000	13 500 000	16 500 000
52	Կապան քաղաքի Վաչագան գետի հունի մաքրում, հենապատերի վերականգնում, նոր ճաղավանդակների տեղադրում և Վաչագան գետի ավազանի էսթետիկ տեսքի վերականգնում	559 718 110	251 873 150	307 844 961
13. Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում		640 086 480	217 731 934	422 354 546
53	Սյունիք, Ազնակ, Դիցմայրի և Բարգուշատ գյուղերի ոռոգման համակարգի կառուցում	473 026 580	141 907 974	331 118 606
54	Առաջաձոր գյուղում ոռոգման ջրագծի խողովակաշարի նորոգում	5 000 000	5 000 000	
55	Գեղանուշ, Ճակատեն, Շիկահող, Ձորաստան, Աղվանի, Անտառաշատ, Շիշկերտ գյուղերի արոտավայրեր տանող ճանապարհների անցանելիության բարելավում	152 059 900	60 823 960	91 235 940
56	Սրաշեն գյուղերի դաշտամիջյան ճանապարհների բարելավում	10 000 000	10 000 000	
14. Շրջակա միջավայրի պահպանություն		190 281 890	28 362 960	161 918 930
57	Վաչագան գետի հունի մաքրում, հայելային պատկերների ու հենապատերի վերականգնում, նոր ճաղավանդակների տեղադրում	190 281 890	28 362 960	161 918 930
19. Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում		600 000	600 000	0
58	Թեքահարթակների կառուցում	600 000	600 000	
ԸՆԴՀԱՆՈՒՐ		5 750 684 393	2 094 675 123	3 656 009 270

ԱՍ համայնքի միջնաժամկետ ծախսերի նյութի 2024-2026թթ. վարչական և ֆորտային մասերի եկամուտները՝ ըստ մատչելի մասերի արդյունքների

Նյութի տեսակը	2023 Վարչապետ						2024 թվական						2025 թվական						2026 թվական		Ծանոթություն
	Ընդամենը		արդյունք		արդյունք		Ընդամենը		արդյունք		արդյունք		Ընդամենը		արդյունք		արդյունք				
	վարչական	ֆորտային	վարչական	ֆորտային	վարչական	ֆորտային	վարչական	ֆորտային	վարչական	ֆորտային	վարչական	ֆորտային	վարչական	ֆորտային	վարչական	ֆորտային	վարչական	ֆորտային			
3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21			
408001.2	324409.7	310872.4	310448.4	306086.3	134579.1	0	0	3 841 926.1	4 214 836.3	4 961 297.5	881 036.8	4 000 257.2	0 729 854.4	4 247 865.2	2 481 989.2	5 878 974.2	4 579 474.3	1 299 500.0			
7100	351385.1	351385.1	0	329036.0	0	0	385 785.5	385 785.5	0	26 740.5	26 740.5	0	371 137.9	371 137.9	389 340.9	389 340.9					
7131	50357.7	50357.7	0	43486.0	0	0	59 127.5	59 127.5	0	15 826.5	15 826.5	0	1 918.0	1 918.0	89 912.9	89 912.9					
	862.9	862.9	0	0	0	0	1 918.0	1 918.0	0	0	0	0	0	0	1 918.0	1 918.0					
	1903.9	1903.9	0	0	0	0	2 486.0	2 486.0	0	2 486.0	2 486.0	0	2 486.0	2 486.0	2 486.0	2 486.0					
	47998.2	47998.2	0	43486.0	0	0	54 729.5	54 729.5	0	11 231.5	11 231.5	0	0	0	85 514.9	85 514.9					
	232647.9	232647.9	0	225996.0	0	0	235 838.0	235 838.0	0	10 240.0	10 240.0	0	0	0	235 838.0	235 838.0					
	232647.9	232647.9	0	225996.0	0	0	235 838.0	235 838.0	0	10 240.0	10 240.0	0	0	0	235 838.0	235 838.0					
7145	47407.5	47407.5	0	42946.0	0	0	42 870.0	42 870.0	0	30.0	30.0	0	0	0	44 404.0	44 404.0					
	1766.0	1766.0	0	1380.0	0	0	1 380.0	1 380.0	0	0	0	0	0	0	1 380.0	1 380.0					
	370.0	370.0	0	226.0	0	0	250.0	250.0	0	30.0	30.0	0	0	0	270.0	270.0					
	5.0	5.0	0	30.0	0	0	30.0	30.0	0	0	0	0	0	0	30.0	30.0					
	3500.0	3500.0	0	3380.0	0	0	3 380.0	3 380.0	0	0	0	0	0	0	3 380.0	3 380.0					
	1171.0	1171.0	0	1099.0	0	0	1 099.0	1 099.0	0	0	0	0	0	0	1 100.0	1 100.0					
	825.0	825.0	0	716.0	0	0	716.0	716.0	0	0	0	0	0	0	716.0	716.0					
	23784.1	23784.1	0	22950.0	0	0	22 800.0	22 800.0	0	0	0	0	0	0	22 000.0	22 000.0					
	574.9	574.9	0	409.0	0	0	409.0	409.0	0	0	0	0	0	0	409.0	409.0					
	1987.5	1987.5	0	1560.0	0	0	1 500.0	1 500.0	0	0	0	0	0	0	1 796.0	1 796.0					
	5438.7	5438.7	0	5980.0	0	0	5 980.0	5 980.0	0	0	0	0	0	0	6 000.0	6 000.0					
	5123.3	5123.3	0	4936.0	0	0	4 006.0	4 006.0	0	0	0	0	0	0	4 500.0	4 500.0					

Տեղեկություններ համայնքի վարչական մասի վերաբերյալ:
 2024 թվականի համայնքի վարչական մասի եկամուտները՝ ըստ մատչելի մասերի արդյունքների
 2025 թվականի համայնքի վարչական մասի եկամուտները՝ ըստ մատչելի մասերի արդյունքների
 2026 թվականի համայնքի վարչական մասի եկամուտները՝ ըստ մատչելի մասերի արդյունքների
 2024 թվականի համայնքի ֆորտային մասի եկամուտները՝ ըստ մատչելի մասերի արդյունքների
 2025 թվականի համայնքի ֆորտային մասի եկամուտները՝ ըստ մատչելի մասերի արդյունքների
 2026 թվականի համայնքի ֆորտային մասի եկամուտները՝ ըստ մատչելի մասերի արդյունքների
 2024 թվականի համայնքի ընդամենը եկամուտները՝ ըստ մատչելի մասերի արդյունքների
 2025 թվականի համայնքի ընդամենը եկամուտները՝ ըստ մատչելի մասերի արդյունքների
 2026 թվականի համայնքի ընդամենը եկամուտները՝ ըստ մատչելի մասերի արդյունքների

Ընդամենը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48	49	50	51	52	53	54	55	56	57	58	59	60	61	62	63	64	65	66	67	68	69	70	71	72	73	74	75	76	77	78	79	80	81	82	83	84	85	86	87	88	89	90	91	92	93	94	95	96	97	98	99	100	101	102	103	104	105	106	107	108	109	110	111	112	113	114	115	116	117	118	119	120	121	122	123	124	125	126	127	128	129	130	131	132	133	134	135	136	137	138	139	140	141	142	143	144	145	146	147	148	149	150	151	152	153	154	155	156	157	158	159	160	161	162	163	164	165	166	167	168	169	170	171	172	173	174	175	176	177	178	179	180	181	182	183	184	185	186	187	188	189	190	191	192	193	194	195	196	197	198	199	200	201	202	203	204	205	206	207	208	209	210	211	212	213	214	215	216	217	218	219	220	221	222	223	224	225	226	227	228	229	230	231	232	233	234	235	236	237	238	239	240	241	242	243	244	245	246	247	248	249	250	251	252	253	254	255	256	257	258	259	260	261	262	263	264	265	266	267	268	269	270	271	272	273	274	275	276	277	278	279	280	281	282	283	284	285	286	287	288	289	290	291	292	293	294	295	296	297	298	299	300	301	302	303	304	305	306	307	308	309	310	311	312	313	314	315	316	317	318	319	320	321	322	323	324	325	326	327	328	329	330	331	332	333	334	335	336	337	338	339	340	341	342	343	344	345	346	347	348	349	350	351	352	353	354	355	356	357	358	359	360	361	362	363	364	365	366	367	368	369	370	371	372	373	374	375	376	377	378	379	380	381	382	383	384	385	386	387	388	389	390	391	392	393	394	395	396	397	398	399	400	401	402	403	404	405	406	407	408	409	410	411	412	413	414	415	416	417	418	419	420	421	422	423	424	425	426	427	428	429	430	431	432	433	434	435	436	437	438	439	440	441	442	443	444	445	446	447	448	449	450	451	452	453	454	455	456	457	458	459	460	461	462	463	464	465	466	467	468	469	470	471	472	473	474	475	476	477	478	479	480	481	482	483	484	485	486	487	488	489	490	491	492	493	494	495	496	497	498	499	500	501	502	503	504	505	506	507	508	509	510	511	512	513	514	515	516	517	518	519	520	521	522	523	524	525	526	527	528	529	530	531	532	533	534	535	536	537	538	539	540	541	542	543	544	545	546	547	548	549	550	551	552	553	554	555	556	557	558	559	560	561	562	563	564	565	566	567	568	569	570	571	572	573	574	575	576	577	578	579	580	581	582	583	584	585	586	587	588	589	590	591	592	593	594	595	596	597	598	599	600	601	602	603	604	605	606	607	608	609	610	611	612	613	614	615	616	617	618	619	620	621	622	623	624	625	626	627	628	629	630	631	632	633	634	635	636	637	638	639	640	641	642	643	644	645	646	647	648	649	650	651	652	653	654	655	656	657	658	659	660	661	662	663	664	665	666	667	668	669	670	671	672	673	674	675	676	677	678	679	680	681	682	683	684	685	686	687	688	689	690	691	692	693	694	695	696	697	698	699	700	701	702	703	704	705	706	707	708	709	710	711	712	713	714	715	716	717	718	719	720	721	722	723	724	725	726	727	728	729	730	731	732	733	734	735	736	737	738	739	740	741	742	743	744	745	746	747	748	749	750	751	752	753	754	755	756	757	758	759	760	761	762	763	764	765	766	767	768	769	770	771	772	773	774	775	776	777	778	779	780	781	782	783	784	785	786	787	788	789	790	791	792	793	794	795	796	797	798	799	800	801	802	803	804	805	806	807	808	809	810	811	812	813	814	815	816	817	818	819	820	821	822	823	824	825	826	827	828	829	830	831	832	833	834	835	836	837	838	839	840	841	842	843	844	845	846	847	848	849	850	851	852	853	854	855	856	857	858	859	860	861	862	863	864	865	866	867	868	869	870	871	872	873	874	875	876	877	878	879	880	881	882	883	884	885	886	887	888	889	890	891	892	893	894	895	896	897	898	899	900	901	902	903	904	905	906	907	908	909	910	911	912	913	914	915	916	917	918	919	920	921	922	923	924	925	926	927	928	929	930	931	932	933	934	935	936	937	938	939	940	941	942	943	944	945	946	947	948	949	950	951	952	953	954	955	956	957	958	959	960	961	962	963	964	965	966	967	968	969	970	971	972	973	974	975	976	977	978	979	980	981	982	983	984	985	986	987	988	989	990	991	992	993	994	995	996	997	998	999	1000
